600.0322.12.07.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 հուլիսի 2017 թվականի №322Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի №482Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՈՐՈՏԱՆ ՍԻՍՏԵՄՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի հունիսի 29-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 29-ի «ՈՐՈՏԱՆ ՍԻՍՏԵՄՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Որոտան» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №482Ա՝
   1) որոշման մեջ «մինչև 2017 թվականի հոկտեմբերի 28-ը» բառերը փոխարինել «մինչև 2017 թվականի հուլիսի 12-ը» բառերով.
   2) որոշման 2-րդ կետով հաստատված՝ «ՈՐՈՏԱՆ ՍԻՍՏԵՄՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Որոտան» փոքր հիդրոէլեկտրա-կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0571 լիցենզիայի պայմանների 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. «Որոտան» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 3648 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) հիդրոտուրբին՝ G125063/28g, 3712 կՎտ, 2016թ.,

2) գեներատոր՝ SEH-710L6, անվանական հզորությունը 3474 կՎտ, թույլատրելի աշխատանքային հզորությունը՝ 3648 կՎտ, 2016թ.:»:

2. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2014 թվականի դեկտեմբերի 11-ի №8023-02 և 2014 թվականի դեկտեմբերի 17-ի №8211-02 գրություններով ներկայացված երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած ինը միլիոն քսանհինգ հազար դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
12 հուլիսի 2017թ.
ժամը 16[00]